Հետազոտական աշխատանք

Տիտղոսաթերթ (1 էջ)

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	«Կարողունակությունների և արժեհամակարգի ձևավորումը իրավիճակային (սոցիալական) պատմությունների միջոցով IX դասարանում»:
Ուսուցչի տվյալներ • Ա.Ա.Հ. • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	• Աղամալյան Անի Սանդրոյի • Մանկավարժ-բանասեր • • Ռուսաց լեզու և գրականություն • IX, VI, V, III
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	• Կոտայքի մարզի «Աբովյանի N 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ քաղաք Աբովյան, Տարտուի 1/15 • 2- 57-92 • abovyan2@schools.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանք(տիտղոսաթերթ)..... 1

Բովանդակություն..... 2

Ներածություն 3

Պարագրաֆներ/մասեր..... 5

Գրականության ակնարկ..... 5

Հետազոտության ընթացք և տվյալների հավաքագրում 12

Օգտագործված մեթոդներ 23

Եզրակացություններ 24

Օգտագործված գրականության ցանկ..... 26

Հավելված 27

Հաշվետվության կցված նյութեր 29

Նպատակը եւ հետազոտական հարցը	Հետազոտական աշխատանքի նպատակը տարբեր հնարների, մեթոդների համադրմամբ ու կիրառմամբ սովորողների արժեհամակարգի, կարողունակությունների ձևավորումն է վերլուծական, քննադատական մտքի զարգացմանը միջոցով: Կրթական համակարգում, գիտական ու տեխնիկական առաջընթացով պայմանավորված՝ շարունակական կերպով տեղի են ունենում արդիականացման գործընթացներ: Այսօր պահանջված են ուրույն մտածողություն ունեցող ,ստեղծագործ, վառ երևակայությամբ օժտված անձինք,ովքեր դժվարին իրավիճակում փորձում են գտնել հնարավորություններ, ունեն ինքնազարգացման և առաջընթացի մեծ ձգտում: Ստեղծագործական կարողությունները բնորոշ են ցանկացած անհատի: Դպրոցահասակ երեխաները պետք է ոչ միայն տիրապետեն դպրոցական ծրագրային նյութին, այլև կարողանան այն ստեղծագործաբար կիրառել, լուծում գտնել ցանկացած իրավիճակում: Իսկ դա հնարավոր է միայն մանկավարժական նպատակային գործունեության արդյունքում:

Ներածություն (1-ից 2 էջ)

Թեմայի կարեւորությունը եւ նշանակությունը Ձեր/թիրախային խմբի համար	Հետազոտության թեմայի կարևորությունը և արդիականությունը պայմանավորված է կրթական համակարգի բարեփոխումների արդի շրջափուլում կրթական չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքներով, համաձայն որոնց՝ ուսուցիչն ամեն կերպ պետք է խթանի սովորողի ինքնուրույն մտածելու, կշռադատելու, որպես նախաձեռնող հանդես գալու ստեղծագործական ունակությունները՝ լավագույնս դրսևորվելու ցանկացած իրավիճակում: Մտորելով նշված հիմնահացերի շուրջ, թե ինչքանով են իրավիճակային պատմությունները նպաստում վերոնշյալ արժեքների և կարողունակությունների ձևավորմանը ու զարգացմանը, թիրախային խումբ ընտրեցի 9-րդ դասարանի աշակերտներին:

Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Ինքնաճանաչողականություն և սոցիալական կարողունակություն

Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին	«Առարկայական մեթոդիկա» թեմայի շրջանակներում

Գրականության ակնարկ ● Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, ● Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: **<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>**	**Կարողունակություններ և արժեքներ** Դեռևս հին ժամանակներից սկսած՝ ուսուցման գործընթացի կարևորագույն պահանջներից է եղել ապահովել և դաստիարակել կրթված սերունդներ: Եվ պատահական չէ, որ ռուս մանկավարժ և գրող Ա. Ս. Մակարենկոն քննադատում էր երեխային մանկավարժության օբյեկտ համարող մանկավարժներին: Նա մանկավարժական օբյեկտ էր համարում մանկավարժական փաստը (երևույթը), ընդ որում նշում էր , որ երեխան դուրս չի մնում հետազոտողի ուշադրությունից, ընդհակառակը, մանկավարժությունը, լինելով մարդու մասին գիտություններից մեկը, ուսումնահիրում է անձի ձևավորման համար նպատակաուղղած գործունեությունը:[1] Ուստի ճիշտ կրթված յուրաքանչյուր աշակերտի ձեռք բերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները նպաստում են անհատի սեփական հայացքները, համոզմունքները, ստեղծագործական ընդունակությունները, բարոյական ու հոգևոր արժեքները և հասարակական վարքը յուրովի դրսևորելուն:[2] Լինելով ուսուցիչ և ծնող՝ ուսումնական գործընթացում տարատեսակ հարցերի,

Պարագրաֆներ/մասեր (10-15 էջ)

[1] Անտոն Սեմենովիչ Մակարենկոյի կրթական գաղափարներն ու կենսագրությունը

[2] Յուրի Ամիրջանյան, Անատոլի Սահակյան Մանկավարժության ձեռնարկ «(Մանկավարժ 2005)

	երևույթների ուսումնասիրման և փորձի փոխանակման քննարկումների ընթացքում հաճախ առնչվել ենք այնպիսի խնդիրների, որոնց լուծման համար փորձել ենք գտնել այնպիսի միջոցներ և հնարներ, որոնք մեզ՝ ուսուցիչներիս, թույլ կտան ճիշտ մեթոդներով կրթել ժամանակին համահունչ սերունդ: Նոր մեթոդների ներդրումը կրթական համակարգ հնարավորություն է տալիս սովորողին դառնալու դասի ընթացքի անմիջական նախագծողը, ինչի արդյունքում բուն դասապրոցեսը դադարում է սովորողի համար լինել ձանձրալի: Ուսուցչակենտրոն ուսուցումը վերափոխվում է աշակերտակենտրոն ուսուցման: Նմանօրինակ բարեփոխումները մեծապես խթանում են սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացումը, ինչպես նաև ստեղծագործաբար մտածելու ու գործելու կարողությունը: Ինքնուրույն մտածելու և գործելու կարողությունը աստիճանաբար վերածվում է կարողունակության: Եվ տեղին է հիշել ռուս գիտնական Տատյանա Չերնիգովսկայի խոսքերը. «Պետք է կարողանանք ճանաչել մեր երեխաներին՝ հետաքրքրությունները բացահայտելով, նրանց լայն հնարավորություններ ընձեռելով:»[3]

[3] Տատյանա Չերնիգովսկայա, Մենք և մեր երեխաները, 2022թ /https://www.youtube.com/watch?v=10eTVYe5Hwo

	Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են: Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով:[4] Կարողունակությունների հիմնական բաղադրիչներից են ոչ միայն գիտելիքն ու հմտությունները, այլև արժեքները և վերաբերմունքը: Կարողունակությունների ձևավորման ընթացքում սովորողի՝ արդեն իսկ ձեռք բերած գիտելիքներին և հմտություններին ավելանում են արժեքներ (ձևավորվում է արժեհամակարգ), սովորողը առաջ է քաշում սեփական դիրքորոշումները տարբեր իրավիճակներում և ազատ ու անկաշկանդ կարողանում է «գործել»: **Գիտելիք+ հմտություն+դիրքորոշումներ= գործողություն**

[4] Հանրակրթության պետական չափորոշիչ

	Միջնակարգ կրթության կարողունակություններն են՝ ● Լեզվական կարողունակություն և գրագիտություն ● Սովորել սովորելու կարողունակություն ● Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն ● Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն ● Թվային և մեդիա կարողունակություն ● Մշակութային կարողունակություն ● Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն ● Տնտեսական կարողունակություն [5] Կարողունակությունները ձևավորում են՝ ❖ ուսումնական առարկաների, ծրագրերի բովանդակության յուրացում՝ **գիտելիք** ● **Գիտելիքները** ներառում են փաստեր, թվեր, գաղափարներ, տեսություններ, որոնք նպաստում են տվյալ առարկայի և խնդրի հասկացմանը ❖ ուսումնառության կազմակերպման տարբեր ձևերի և մեթոդների կիրառում՝ **հմտություն** ● **Հմտությունները** կոնկրետ գործողություններ կատարելու և ունեցած գիտելիքները արդյունքների հասցնելու համար օգտագործելու կարողություն են:

[5] Հանրակրթության պետական չափորոշիչ II. ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐՋԱՆԱՎԱՐՏԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

	❖ Ուսուցման գործընթացում որոշակի վերաբերմունքի մշակում՝ **դիրքորոշում** • **Դիրքորոշումը** անձի ներքին և առավելապես ենթագիտակցական պատրաստակամությունը ակտիվության որևէ տեսակ իրագործելու համար է : ❖ սովորողի նկարագիր, բարոյական որակներ՝ **արժեքային համակարգ** • **Արժեքները** սկզբունքներ են, որոնց հիման վրա մարդն արձագանքում է գաղափարներին, երևույթներին, այլ մարդկանց և իրավիճակներին: Իսկ ի՞նչ է արժեքը: Արժեքը իմաստ է: Այն իմաստավորում է կյանքը: Այն էթիկայի նորմ է: Այն մտածելակերպ է, որից էլ բխում է մեր վարքագիծը: Արժեքները ազդում են մեր որոշումների, նպատակների և վարքագծի վրա: ***«Կրթությունն առանց արժեքների կաղ է, իսկ արժեքներն առանց կրթության կույր են»:***[6] **Արժեհամակարգ** հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել

	ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական,

[6] Աֆորիզմներ Պ.Պ. պետրով, Յա. Վ. Բերլին Երևան «Հայաստան» 1989թ

	գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին:[7] Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու արժեհամակարգ հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստույգությունից: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է լեզվի և գրականության դերը՝ առանց նույնիսկ էականորեն տարանջատելու մայրենի և օտար

	լեզուների նշանակությունը սույն խնդրի առնչությամբ: Աշակերտի **արժեքների** ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները,

[7] /https://editprint.am/students/ Արմինե Գրիգորյան «Ազգային արժեքային համակարգի ձևավորումը

	այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին:[8] Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից:»

[8] / https://vsu.am/grqer/2017/aprak/paremuzyaninna.pdf/ Փարեմուզյան Ինննա

Սովորողների արժեհամակարգի ձևավորում հանրակրթական ուսումնական հաստատությունում

	Հետազոտության ընթացք և տվյալների հավաքագրում Հետազոտական աշխատանքի արդյունավետության և իրականացման նպատակով IX դասարանում ի սկզբանե փորձեցի անցկացնել բաց հարցում «իրավիճակային պատմություններ», «իրավիճակային խնդիրներ» արտահայտությունների հետ կապված՝ հասկանալու համար, թե ինչքանով է աշակերտը պատկերացնում առաջադրված հարցի բնույթը: Երբ դուրս բերվեցին «իրավիճակային պատմություններ», «իրավիճակային խնդիրներ» արտահայտություններից բխող գաղափարները, աշակերտները հասկացան, որ հետազոտական աշխատանքի ավարտին իրենց մոտ կձևավորվեն համապատասխան կարողունակություններ և արժեքներ կապված տարբեր իրավիճակների հետ: Իսկ ի՞նչ ենք հասկանում՝ «իրավիճակային պատմություններ», «իրավիճակային խնդիրներ» ասելով: Իրավիճակային խնդիրներ, պատմություններ, առաջադրանքներ ասելով՝ մենք հասկանում ենք մեթոդական տեխնիկա, որը ներառում է պայմանների, իրավիճակների մի շարք, որոնք ուղղված են գործնականում նշանակալի իրավիճակի լուծմանը, որպեսզի ձևավորվեն դպրոցական կրթության բովանդակության բաղադրիչներին համապատասխան գիտելիքներ, կարողունակություններ և արժեքներ:

	Հաճախ իրավիճակային խնդիրների լուծման համար սովորողները պետք է իմանան մի քանի առարկաներ: Որպես կանոն, «իրավիճակային պատմությունները» ներառում են՝ Վերնագիր (ցանկալի է վառ՝ գրավելով սովորողների ուշադրությունը), իրավիճակ՝ դեպք, խնդիր, պատմություն իրական կյանքից (տեքստ, աղյուսակ, գրաֆիկ, վիճակագրություն), խնդրահարույց հարց՝ որպես պարտադիր տարր, որը պետք է ձևակերպվի այնպես, որ սովորողը ցանկանա գտնել դրա պատասխանը, առաջադրանքներ ստեղծելիս անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների տարիքային առանձնահատկությունները: խնդիրը, որը դրված է իրավիճակային առաջադրանքի հիմքում, պետք է պարզ լինի աշակերտի համար: առաջադրանքը պետք է ձևակերպված լինի պատմվածքի տեսքով: առաջադրանքի համար անհրաժեշտ է վերցնել դպրոցականների ուշադրությունը գրավող թեմաներ: առաջադրանքը պետք է լինի իրական կյանքից, որը սովորողների մոտ հետաքրքրություն կառաջացնի: լավ մշակված իրավիճակային առաջադրանքը կարող է առաջացնել կարեկցանքի զգացում գլխավոր դերակատարների նկատմամբ:

կարևոր է, որ առաջադրանքը ներկայացնի իրական իրավիճակ, որը կնպաստի տարբեր հույզերի դրսևորմանը՝ համակրանք, զարմանք, ուրախություն, զայրույթ և այլն:

Իրավիճակային խնդիրների լուծման օգտագործումը թույլ է տալիս սովորողներին իրենց համար առավել հարմար ձևով հասնել գիտելիքների պահանջվող մակարդակին, թույլ է տալիս ուսսովորներին տեղեկատվության հետ աշխատելու գործընթացում հաջորդաբար տիրապետել ինտելեկտուալ գործողություններին, ինչպիսիք են՝

- ծանոթացում
- ըմբռնում
- կիրառում
- վերլուծություն
- սինթեզ
- գնահատում

օգնում է զարգացնել սովորողների հմտությունները մոդելավորման, նախագծման և կառուցման մեջ:

Հասարակության էվոլյուցիայի և զարգացման ընթացքում կրթական և մշակույթային մակարդակի նվազման հարցը հետաքրքրել է բազմաթիվ հետազոտողների:

Եվ 1969թ. ամերիկացի հետազոտող-ուսուցիչ Էդգար Դեյլը բացահայտեց ուսուցման արդյունավետ ուղիներ: Նրա բարդ և քրտնաջան աշխատանքի արդյունքը ներկայացվեց կոնաձևի տեսքով, որը կոչվում էր **«Էդգար Դեյլի ուսուցման բուրգ »:**

Ըստ Դեյլի ուսուցման բուրգի՝ «Մարդիկ հիշում են իրենց կարդացածի մոտ 10% -ը, իրենց լսածի 20% -ը, իրենց տեսածի 30% -ը, երկուսի լսածի և տեսածի 50% -ը, իրենց ասածի կամ գրածի 70% -ը իրենց կողմից, իրենց ասածի կամ գրածի 90% -ի մասին ցանկացած գործողություն կատարելու ընթացքում:»[9]

Հետազոտության առաջին օրը աշկերտների հետ ինդուկտիվ մեթոդի միջոցով փորձեցինք Է.Դեյլի ուսուցման բուրգի հիմնակետերը բաշխել՝ ըստ տոկոսային հարաբերության *(հավելված 1):*

Արդյունքում աշակերտների մեծամասնությունը օտար լեզվի ուսուցման շրջանակներում նախապատվությունը տվեց ընթերցանությանը և բանավոր քննարկումներին: Սակայն մայրենի լեզվով մատուցվող նյութի շրջանակներում նրանք առավել կարևորեցին գիտելիքի գործնական կիրառումը, ինչպես նաև խմբային աշխատանքները և քննարկումները:

Երբ հասկացա, որ աշակերտները ավելի քան կարևորում են ինքնուրույն մտածողությունն ու գործնական կարողությունները, կոնկրետ իրավիճակում կողմնորոշվելու հմտությունները և նախասիրություններով առաջնորդվելը, ներկայացրի առաջին իրավիճակային պատմությունը:

[9] https://skudelnica.ru/hy/psihologiya/piramida-edgara-deila-o-professore-deile-ego-konuse-opyta-i-piramide.html Էդգար Դեյլի բուրգը

	«ԳՈՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐ» Ատոմային ռումբի պայթյունից հետո ապաստարանում հայտնվել են տասը տարբեր տարիքային և տարբեր մասնագիտությունների տեր անձիք՝ հինգ կին, հինգ տղամարդ: (պարուհի՝ *19*տ., ֆիզկուլտուրայի ուսուցիչ՝ կին-*47*տ., ֆիթնեսի ուսուցիչ՝ տղամարդ-*53*տ., ծրագրավորող՝ տղամարդ-*28*տ., դպրոցի փոխտնօրեն՝ կին-*39*տ., էկոնոմիկայի նախարար՝ տղամարդ-*49*տ., դռնապահ՝ կին-*51*տ., վաճառողուհի՝ *20*տ.,փաստաբան՝ տղամարդ-*36*տ., պահակ՝ տղամարդ-*72*տ.*)* Նրանք ունեն ուտելիքի միայն յոթ բաժին: Առաջադրանք-հարցը. Փորձեք բաժանել յոթ բաժին ուտելիքը տասը հոգու միջև: Վիճակահանությամբ ձևավորվեց 4 խումբ՝ յուրաքանչյուրում չորսական աշակերտ: Մտքերի փոխանակման և քննարկումների համար նրանց հատկացվեց 20 րոպե: Ակտիվ քննարկումներից հետո յուրաքանչյուր խմբի առաջատարը հանդես եկավ պատասխանով՝ հիմնավոր կերպով ներկայացնելով խմբի դիրքորոշումը տվյալ իրավիճակի հետ կապված: Առաջին խումբը, մարդասիրական մոտեցում ցուցաբերելով, փորձել էր յոթ բաժին ուտելիքը կիսել (14բաժին)՝ բոլորին ապրելու հնարավորություն տալով:

	Երկրորդ խումբը, փորձելով գտնել տրված իրավիճակի լուծումը, առաջ էր քաշել մարդու բջջաբանական առանձնահատկությունը:

	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կենդանի օրգանիզմների բջջային կազմաբանության մեջ մեծ դեր ունի ԱԵՖ-ը (ադենոզինեռֆոսֆորական թթու)[10], որը երիտասարդների մոտ սպառվում է ամբողջությամբ 40-50 օրվա ընթացքում, իսկ մեծահասակների մոտ մինչև 40-րդ օրը, և այն, որ երիտասարդ օրգանիզմները ունեն ավելի բարձր դիմադրողականություն, քան տարեցները, որոշեցին կերակրի բաժինը բաշխել մեծահասակների միջև: Երրորդ խումբ Հասկանալով իրավիճակի լրջությունը և ծայրահեղությունը՝ հաջորդ խումբը պահի թելադրանքով որոշում կայացրեց «սպանել» անդամներից երեքին: Նրանք իրենց որոշումը մեկնաբանեցին հետևյալ կերպ. երբ կա գոյության պայքար, մարդը դառնում է ագրեսիվ, դյուրագրգիռ, հաճախ չի գիտակցում կատարած քայլերի լրջությունը և, փորձելով պաշտպանել սեփական անձը, պատրաստ է նույնիսկ մարդասպանության: Չորրորդ խումբը միաձայն, շատ կարճ ժամանակահատվածում որոշեց հարցին տալ հետևյալ լուծումը: Առաջնորդվելով «մեր ուժը միասնության մեջ է» նշանաբանով՝ չորրորդ խմբի անդամները որոշեցին յուրաքանչյուր օր ուտելիքի մեկական բաժին կիսել բոլորի միջև և դիմակայել այնքան, ինչքան որ հնարավոր է:

[10] Կենսաբանություն 9 դասարան, էջ25

	Երբ իրավիճակային պատմության հարցը բարդացվեց՝ թողնել միայն չորս անդամ, աշակերտները հնչեցրին պատասխաններ՝ հիմք ընդունելով իրենց իսկ հնչեցրած կարծիքները: Բոլոր խմբերի պատասխանները լսելուց, մեկնաբանելուց և քննարկելուց հետո խմբի անդամների կողմից մեջբերվեցին նաև մի շարք այլ պատասխաններ: Քիչ թե շատ կարևորելով մասնագիտությունների դերը մարդու կյանքում՝ անդամներից շատերը ցանկացել էին ապրելու հնարավորություն տալ ֆինանսների նախարարին՝ հետագայում կայուն ֆինանսական և տնտեսական իրավիճակ ապահովելու համար փոխտնօրենին՝ կրթական ոլորտը ապահովելու համար փաստաբանին՝ որպես մարդու իրավունքների պաշտպանի ծրագրավորողին՝ տեղեկատվական տեխնոլոգիաները զարգացնելու համար: Ոմանք, արժևորելով մարդկության շարունակականության գործոնը, որոշեցին ողջ թողնել երկու երիտասարդ կնոջ և երկու տղամարդու: Հարցի լուծման տարբերակ էին նաև դիտարկել "անձնազոհությունը"(ո՞վ է պատրաստ զոհաբերելու սեփական կյանքը հանուն մյուսների), "երջանիկ պատահականությունը" (жеребёвка) «Ես իրավունք չունեմ զրկելու որևէ մեկին կյանքից, երբ այդ կյանքը ես չեմ տվել» գաղափարախոսությամբ:

Վերլուծելով առաջին իրավիճակային պատմությունը՝ աշակերտները բավականին տպավորված էին այն առումով, որ կարողացան գտնել տարատեսակ լուծումներ, և որ ցանկացած իրավիճակում լուծումը միայն մեկը չէ: Պահպանելով հետազոտական աշխատանքի հաջորդականությունը՝ ներկայացվեցին ևս մի քանի իրավիճակային պատմություններ:

«ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» *(Հավելված 2)*

Առաջադրանք-հարցը. Ի՞նչ պատասխան հնչեցրեց միջահասակ տղամարդը, երբ իր տված հարցին «Դուք արդյոք ոչինչ չե՞ք թողել կամ մոռացել այստեղ» հաջորդեց որդու դրական կամ բացասական պատասխանը: Այս իրավիճակին լուծում տալու համար աշակերտերից յուրաքանչյուրը անհատական թերթիկների վրա անանուն կերպով նշեց իր պատասխանները: Պատասխաններին ծանոթանալուց հետո խմբավորեցի և դուրս բերեցի հետևյալ արդյունքները: Սովորողների մի մասը, անչափ կարևորելով երեխա-ծնող փոխհարբերությունները, արժևորել էր որդու կատարած քայլը, պահվածքը և մի պահ, պատկերացնելով իրենց գլխավոր հերոսի կերպարում, ունեցել էր մեծ հպարտության ու բավարարվածության զգացում և միջահասակ տղամարդու պատասխանը ձևակերպել էր հետևյալ կերպ. «Կարծում եմ, Դուք թողեցիք դաստիարակված և արժանի որդու վառ օրինակ մյուսների համար»:

Ունենալով նման դիրքորոշում՝ ոմանք

	պատասխանել էին որդու փոխարեն այս կերպ. «Այո՛, ես մոռացել եմ ներկաների պահվածքին համարժեք պատասխան տալ, ըստ որի՝ յուրաքանչյուրն էլ իր կյանքի մայրամուտին կարող է հայտնվել նման իրավիճակում»: Աշակերտներից մի քանիսն էլ, փորձելով տալ ստեղծված իրավիճակին որևէ գնահատական, քննադատաբար մոտեցան երիտասարդի արարքին՝ նշելով, որ նա խայտառակեց իրեն ու հորը , և պատասխանեցին միջահասակ տղամարդու կողմից ուղղված հարցին այս կերպ՝ «Կներեք, ես մոռացել եմ ներողություն խնդրել հորս պահվածքի համար»: Այս իրավիճակային հարցը սովորողների հետ միասին քննարկելու ընթացքում տեղի ունեցավ կարծիքների բախում, իսկ վերջնարդյունքը եղավ այն, որ նրանք միավորվեցին ընդհանուր գաղափարի շուրջ. «Մենք պետք է ընդունենք մեր ծնեղներին այնպիսին, ինչպիսին որ նրանք կան»: **«ԳԱՉԱՐ, ՁՈՒ, ՍՈՒՐՃ»** *(Հավելված 3, ներկայացվեց մասամբ)* <u>Առաջադրանք-հարցը</u>. 1. Ի՞նչ փոփոխություն տեղի ունեցավ: 2. Ելնելով երեք առակների օրինակից՝ ինչպիսին կլիներ ձեր կարծիքով հոր պատասխանը: Իրավիճակային քննարկումը իրականացվեց խմբային աշխատանքի միջոցով: Ձևավորված բոլոր չորս խմբերն էլ եռացող ջուրը դիտարկեցին որպես անբարենպաստ միջավայր,որտեղ երեք առարկաներն էլ կրեցին կառուցվածքային փոփոխություն:

	Ձուն հեղուկ վիճակից անցավ պինդ վիճակի, պինդ գազարը փխրուն դարձավ, իսկ սուրճը տարրալուծվեց: Ելնելով վերոնշյալ ընդհանուր փաստերից՝ կփորձեմ ներկայացնել յուրաքանչյուր խմբի պատասխանը: Առաջին խումբ Դիտարկելով ձվի օրինակը՝ աշակերտները ջուրը նույնացրել էին խնդիրների հետ, իսկ ձուն էլ՝ մարդու: Հաղթահարելով բազմաթիվ խոչընդոտներ՝ մարդը ամրանում է և ավելի դիմացկուն դառնում: Սուրճի դեպքում մարդը՝ որպես սուրճ, չի կարողանում հաղթահարել խնդիրները և ընկղմվում է դրանց մեջ: Գազարի պարագայում ամուր մարդիկ դիմակայում են խնդիրներին, շատ ժամանակ թուլանում են, սակայն չեն կորցնում իրենց տեսակը (գազարը եփվելիս ջրին տալիս է վառ երանգավորում) Երկրորդ խումբը անդրադարձել է ձվի կառուցվածքային առանձնահատկությանը՝ նշելով, որ այն եռաշերտ է: Կեղևը նմանեցրել էին տեսակով «փխրուն» մարդու, սպիտակուցը նույնացրել էին համբերության հետ, իսկ դեղնուցը՝ բազմաթիվ խնդիրները համբերատար հաղթահարող, նպատակասլաց, անկոտրում մարդու հետ: Գազարի կառուցվածքային փոփոխությունը (պինդ→փափուկ) դիտարկել էին դժվարությունների արդյունքում ընկճված մարդու օրինակով: Եռացող սուրճը, որը բարձրանում է, նմանեցրել էին իր ափերից դուրս եկող մարդու

	հետ, ում համբերության բաժակը արդեն լցվել է:

	Երրորդ խումբը ուշադրություն էր դարձրել առարկաների արտաքին տեսքին՝ նշելով, որ դրանք արտաքին փոփոխություն չեն կրել, այլ փոխվել են միայն ներքուստ, հետևաբար ցանկացած խնդրի լուծում պետք է մարդ գտնի իր ներսում և ոչ թե արտաքին միջավայրում: Ուստի լուծման միակ եղանակը համարեցին ինքնաճանաչողությունը՝ մեջբերելով Գարեգին Նժդեհի հետևյալ խոսքերը. «Ծանիր զքեզ (ճանաչիր ինքդ քեզ). չի կարելի մարել այն, որն էությամբ անմարելի է՝ հայկական ոգին:» Սուրճի դեպքում երկրորդ և երրորդ խմբի պատասխանները համընկան: Չորրորդ խմբի պատասխանը փոքր-ինչ տարբերվեց: Նրանք եռման գործընթացը նույնացրել էին չարչարանքների հետ և, չցանկանալով որևէ փոփոխության ենթարկել մարդուն, հարցին տվել էին յուրօրինակ լուծում՝ լքել այդ միջավայրն ու գնալ հանգստի՝ մի կողմ թողնելով բոլոր գործերն ու հոգսերը: Իրավիճակային պատմությունը մասամբ ներկայացնելուց և համարժեք պատասխանները լսելուց հետո պատմությունը ամբողջացվեց, և բուն պատմության վերջնարդյունքից ելնելով՝ անցկացվեց բաց հարցում: Ընտրե՛ք երեք առարկաներից այն մեկի կարգավիճակը, որով կառաջնորդվեք դուք որևէ դժվար իրավիճակին լուծում տալիս:

	Արդյունքները հետևյալն էին՝ գազար-*6* աշ.,ձու-*4* աշ., սուրճ-*4* աշ.:(Հավելված *4)*

Օգտագործված մեթոդները	Հետազոտական աշխատանքը իրականացվել է քանակական հետազոտություն հարցաթերթիկների միջոցով, խմբային աշխատանքների, հարց ու պատասխանի, բանավեճերի և քարտային աշխատանքների կիրառմամբ:

Իրականացման ժամանակահատվածը	1.09/23.09.2022թ.

Թիրախ խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	IX դասարան 14աշ. (4տղա, 10աղջիկ)

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Մեկամսյա հետազոտական աշխատանքը ավարտելուց հետո, վերլուծելով արդյունքները, եկա հետևյալ եզրահանգումներին: Ուսուցումը աշակերտի և ուսուցչի գործունեության երկկողմանի գործընթաց է, որն ուղղված է հմտությունների և կարողությունների ձևավորմանը ու զարգացմանը: Նոր չափորոշչային պահանջներով առավել կարևորվում են կարողունակություններով օժտված անհատները, և դրան հասնելու համար բոլորս պետք է համախմբենք մեր ուժերը. ամեն մեկս մեր տեղում, մեր ոլորտում գործենք՝ փոխելով ինչպես հայեցակարգերը, այնպես էլ գործողությունների ծրագրերը: Իսկ ինչ-որ բան փոխելու համար պետք է նախ մենք փոխվենք. լինենք բաց մտածող, փոփոխություններին արագ հարմարվող, ճկուն ու դինամիկ, սովորենք «մանր քայլերի արվեստը»: Հետազոտական աշխատանքի ընթացքում դասերը բավականին արդյունավետ էին, քանի որ բոլորն էլ անկեղծացան, կարևորեցին ազնվությունն ու խիղճը, հասկացան, որ պետք է աջակցեն միմյանց, ապրումակցեն և, ինչու չէ, միմյանց հոգսով ապրեն: Իրավիճակային պատմությունները նպաստեցին նրանց ինքնաճանաչողությանն ու քննադատական մտածողության զարգացմանը, և ինչպես նշեցին աշակերտները, նրանք ճանաչեցին միմյանց, սեփական անձը և ավելի մտերմացան: Իրավիճակային հարցերին տված պատասխանները վկայեցին, որ դասարանի մեծ մասի մոտ վերլուծական միտքը, հմտությունները բավականին «մարզվել» են տարբեր իրավիճակներում

Եզրակացություններ, առաջարկություններ (1-2 էջ)

	ճիշտ կողմնորոշվիս, լուծումներ փնտրելիս և տարատեսակ ելքեր գտնելիս: Խմբային աշխատանքների ժամանակ նրանք սովորեցին ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները , միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: ինքնուրույն մտածողությունն ու գործնական կարողությունները, կոնկրետ իրավիճակում կողմնորոշվելու հմտությունները, նախասիրություններով առաջնորդվելը թույլ տվեցին յուրաքանչյուր աշակերտի բարձրացնել ինքնագնահատականը և հավատալ սեփական ուժերին: Իրավիճակային պատմություններին լուծում տալու ընթացքում հաճախ ստեղծվեցին միջառարկային կապեր՝ ավելի հիմնավոր դարձնելով պատասխանները: Հետազոտական գործընթացը ցույց տվեց, որ իրավիճակային պատմությունները կարող են զարգացնել այնպիսի մարդկային որակներ և արժեհամակարգ, որոնցով հետագայում նրանցից յուրաքանչյուրը կառաջնորդվի կյանքի տարատեսակ պայմաններում և հանգամանքներում: Եղան նաև առաջարկներ ուսուցման կազմակերպման շուրջ՝ նշելով այն հանգամանքը, որ ավելի նպատակահարմար և արդյունավետ կլինի, երբ աշակերները խմբավորվեն ըստ իրենց կարողությունների և առաջադիմության մակարդակի, քանի որ նկատելի էր որոշ աշակերտների պասիվությունը: Եվ վերջում աշխատությունը կուզեմ ավարտել Պլուտարքոսի հայտնի խոսքով. «Աշակերտը անոթ չէ, որը պետք է լցնել, այլ ջահ, որը պետք է վառել, իսկ ջահը կարող է վառել միայն նա, ով ինքն է վառվում»:

Օգտագործված գրականության ցանկ (1-2 էջ)

1. Անտոն Սեմենովիչ Մակարենկոյի կրթական գաղափարներն ու կենսագրությունը
2. Յուրի Ամիրջանյան, Անատոլի Սահակյան Մանկավարժության ձեռնարկ «(Մանկավարժ 2005)
3. Տատյանա Չերնիգովսկայա, Մենք և մեր երեխաները, 2022թ /https://www.youtube.com/watch?v=10eTVYe5Hwo
4. Հանրակրթության պետական չափորոշիչ
5. Հանրակրթության պետական չափորոշիչ II. ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐՋԱՆԱՎԱՐՏԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
6. Աֆորիզմներ Պ.Պ. պետրով, Յա. Վ. Բերլին Երևան «Հայաստան» 1989թ
7. /https://editprint.am/students/ Արմինե Գրիգորյան «Ազգային արժեքային համակարգի ձևավորումը»
8. / https://vsu.am/grqer/2017/aprak/paremuzyaninna.pdf/ Փարեմուզյան Իննա Սովորողների արժեհամակարգի ձևավորում հանրակրթական ուսումնական հաստատությունում
9. https://skudelnica.ru/hy/psihologiya/piramida-edgara-deila-o-professore-deile-ego-konuse-opyta-i-piramide.html Էդգար Դեյլի բուրգը
10. Կենսաբանություն 9 դասարան, էջ25

Հավելված

Հավելված1





Հավելված 2

Сын взял с собой на ужин в ресторан престарелого отца. Так как отец был очень стар и беспомощен, во время еды он ронял на себя крошки и кусочки пищи. Посетители ресторана смотрели на него с отвращением, в то время как сын был абсолютно спокоен.

После того, как старик закончил трапезу, его сын так же спокойно и невозмутимо очистил его одежду от остатков еды, пригладил волосы и поправил очки на переносице. Когда они встали из-за стола, весь ресторан смотрел на них в абсолютной тишине, недоумевая, как можно молодому человеку вот так позориться.

Сын подписал счет и повел отца к выходу. И в этот момент один из посетителей, человек преклонного возраста, спросил у молодого человека:

-А вы ничего после себя не оставили?

Հավելված 3

Приходит к отцу молодая девушка и говорит:

— Отец, я устала, у меня такая тяжелая жизнь, такие трудности и проблемы, я все время плыву против течения, у меня нет больше сил… что мне делать?

Отец вместо ответа поставил на огонь 3 одинаковых кастрюли с водой, в одну бросил морковь, в другую положил яйцо, а в третью насыпал зерна кофе. Через некоторое время он вынул из воды морковь и яйцо и налил в чашку кофе из 3 кастрюли.

— Что изменилось? — спросил он свою дочь.

— Яйцо и морковь сварились, а зерна кофе растворились в воде — ответила она.

-Нет, дочь моя, это лишь поверхностный взгляд на вещи. Посмотри — твердая морковь, побывав в кипятке, стала мягкой и податливой. Хрупкое и жидкое яйцо стало твердым. Внешне они не изменились, они лишь изменили свою структуру

под воздействием одинаковых неблагоприятных обстоятельств — кипятка. Так и люди — сильные внешне могут расклеиться и стать слабаками там, где хрупкие и нежные лишь затвердеют и окрепнут…
— А кофе? — спросила дочь
— О! Это самое интересное! Зерна кофе полностью растворились в новой враждебной среде и изменили ее — превратили кипяток в великолепный ароматный напиток. Есть особые люди, которые не изменяются в силу обстоятельств — они изменяют сами обстоятельства и превращают их в нечто новое и прекрасное, извлекая пользу и знания из ситуации…

Հավելված 4



Հաշվետվության կցված նյութեր

- Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ)
- Նկարներ
- Արդյունքներ